ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 29 հունվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընկերակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, իր առաջին պաշտոնական այցելությունը տվեց Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհուրդ:

Կրոնի գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանի հետ հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց խորհրդի գործունեությանը: Նորին Սրբությունը հորդորեց զարգացնել Եկեղեցի-պետություն համագործակցության այս օղակը և առավել հաճախակի դարձնել նմանատիպ հանդիպումները նաև թեմական առաջնորդների հետ:

Իբրև անդրանիկ այցելության հիշատակ, Վեհափառ Հայրապետը պրն. Մկրտչյանին նվիրեց հայկական մանրանկարչությամբ զարդարված խեցե մի ափսե:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ